



# ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ



Արևմտահայկական Գրադարան Զանապետական Տեսադարան Զանգեզուր

Փնտրել

## Նորություններ



Տպել

### Շատ դիտել են

Նորություն 25/01/12

2012թ-ի ԱՌԱՅԻՆ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՊՀ-Ի ԵՎ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԶԱՆԱԿՈՒՄ

Դիտումներ - 5329

### Հանրագիտարան

Հայկական Լեռնաշխարհ

Դիտումներ - 6632

### Տեսաֆիլմեր

ՀՀ-ի ձևավորման պատմությունը

Դիտումներ - 8810

### Քարտեզներ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՐՆԱՇԽԱՐՀ (ԲՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶԱՐՏԵՉ)

Դիտումներ - 6891

### Հոդվածներ

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-КИТАЙСКИХ ОТНОШЕНИЙ

Դիտումներ - 3143

### Գրքեր

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Դիտումներ - 657

### Փաստաթղթեր

ՀԱՅՅԵՐԻ ԿՈՏՈՐԱՇԱՆՏԵՐԸ ԲԱՔԿԻ ԵՎ ԵԼԻՉԱԿԵՏԱՊՈՒՆ ԵՎ ԼԵՂԱՎԵՐՈՒՄ 1918-1920ԹԹ. (Փաստաթղթերի ու կյուբերի ժողովածու)

Դիտումներ - 163

Հունիս 2024

երկ երբ չբ հնգ ուրբ շբ						
						1
3	4	5	6	7	8	
10	11	12	13	14	15	
17	18	19	20	21	22	
24	25	26	27	28	29	

Հայաստանը և տարածաշրջանը միջազգային հարթակում

Գիտաժողովներ

Մագիստրոսական ծրագրեր

Հեռուստուցում


Նորություններ

Աշխատանքային շտեմարան

Հոլումներ

Գործընկերներ

Կայքի քարտեզ



Սկիզբն է առնում հետ գործակցության շրջանակներում ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ստանձնած կարևոր աշխատանքներից մեկը Հայոց պատմության դպրոցական դասագրքերի պատրաստումն է: 2018 թ. մարտի 14-ին մասնագիտական խումբը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Սիմոնյան (խմբի ղեկավար), պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Միևայան, պ.գ.դ., պրոֆեսոր Արտակ Մովսիսյան, պ.գ.դ., պրոֆեսոր Հայրապետ Մարգարյան, պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Հայրունի, պ.գ.դ., դոցենտ Արման Եղիազարյան, պ.գ.թ., դոցենտ Հովիկ Գրիգորյան, պ.գ.թ., դոցենտ Միեր Հովհաննիսյան, Հայոց պատմության ամբիոնի ախտենտ Գեղամ Բադալյան, բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան (սրբագրիչ, խմբագիր), պ.գ.թ. Վարդան Մխիթարյան (քարտեզագիր)) գումարեց իր հերթական նիստը քննարկելու 4-6-րդ դասարանների դասագրքերի լեզվագիտական և մասնագիտական խմբագրման ի հայտ եկած հարցերը: Մասնագիտական խմբի անդամ, ՀՀ-ի փոխտնօրեն Միեր Հովհաննիսյանը հաշվետու խոսքի մեջ նշեց, որ ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանի հետ աշխատանքներ են իրականացնում դիզայներական խմբի ձևավորման համար՝ հավելելով, որ մոտ օրերին պատրաստ կլինեն առանձին դասերի դիզայնի և լուծումներ ստացած տարբերակները: Դրանց հաջող լինելու դեպքում ցուցաբերված լուծումները կկիրառվեն նաև բոլոր դասագրքերի վրա: Դիտարկվեցին նաև 7-րդ և 8-րդ դասարանների դասագրքերի հարցը և երկու հեղինակների ներկայացրած դասերի օրինակները խմբի մյուս անդամների կողմից քննության առնելու համար տրվեց երկու ամիս ժամանակ: Այդ ընթացքում նախատեսվում է նաև ավարտին հասցնել նշված դասագրքերի մյուս բաժինները: Չուզահեռաբար քննարկվեցին նաև Համազգային հայ կրթական և մշակութային միության գործընկերների մշակված առաջարկները, որոնք ի գիտություն ընդունվեցին: Դիտարկվեցին աշխատանքի ընթացքում ի հայտ եկած տեխնիկական, մեթոդաբանական հարցերը, որոնց շուրջ ձևավորվեցին միասնական մոտեցումներ: Հավելվեց նաև, որ դասագրքերը ոչ միայն կունենան սխիզոնախայերի համար նախատեսված մասնագիտական կուռ բովանդակություն, այլ նաև դասագրքերի համար նախատեսված արդի դիզայնի և լուծումներ, մեթոդական անհրաժեշտ մոտեցումներ, հագեցված կլինեն թեմատիկ քարտեզներով:

Հիշեցնենք, որ ծրագրի գաղափարը սկիզբ առավ 2013 թ., երբ Բեյրութում աշխատանքային այցով գտնվող ՀՀ-ի փոխտնօրեն Միեր Հովհաննիսյանը, ծանոթանալով տեղի հայկական դպրոցներում Հայոց պատմության դասավանդման խնդիրներին, Համազգայինի Վահե Մեթյան հրատարակչության տնօրեն [Հակոբ Հավաթյանի հետ](#) քննարկել էր դասագրքերի ստեղծման հնարավորության հարցը: Արդյունքում երկու կառույցների ղեկավար կազմերի վերջնական համաձայնության գալուց հետո՝ 2014 թ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի գլխավորած մասնագիտական խումբը սկսեց իրականացնել դասագրքաստեղծ աշխատանք: Հատկանշական է

ընդգծել, որ հայրենի պատմագետները [աշխատանքները](#) իրականացնում են առանց որևէ ֆինանսական ակնկալիքների, իսկ Լիբանանում դասագրքերը հրատարակելու պատրաստակամությունն էլ իր վրա վերցրեց Համազգային միությունը: Իրականացվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հետ համատեղ: Աշխատանքների շրջանակներում մասնագիտական խմբի մի շարք անդամներ, այցելելով Լիբանանի հայկական դպրոցներ, մասնագիտական քննարկումներ և դասախոսումներ անցկացրեցին տեղի [հայկական դպրոցներում](#):

Վերադառնալ

www.armin.am -ին պարտադրյալ է:'"/>

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Կայքի նյութերի մասնակի կամ ամբողջական օգտագործումը քննարկման ենթակա է: Գրությունների կատարման դեպքում հղումը [www.armin.am](http://www.armin.am) -ին պարտադրյալ է:

ԳՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1,  
 ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ,  
 Հեռ.՝ + 37460 71-00-92  
 Էլ-փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)  
 © ԵՊՀ Հայագիտական  
 Հետազոտությունների Ինստիտուտ: